«EXTRA CASCO» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Խմբագրություն՝ CE01
Ակտիվի դաս՝ հրապարակային

1. Ի՞ՆՉ Է «EXTRA CASCO» ԾՐԱԳԻՐԸ

Ծրագիրն առաջարկում է ավտոտրանսպորտային միջոցի ԿԱՍԿՈ ապահովագրության ընդլայնված ծածկույթ, որը ներառում է՝

1. **ԿԱՍԿՈ ՍՏԱՆԴԱՐՏ ՌԻՍԿԵՐ**, այդ թվում՝
- ✓ *Վթար (ՃՏՊ),*
- ✓ *Բնական աղետներ,*
- ✓ *Հրդեհ, պայթյուն, որն առաջացել է ՃՏՊ հետևանքով,*
- ✓ *Կենդանիների կողմից հասցված վնաս,*
- ✓ *Թռչող սարքավորումների կամ այլ առարկաների, այդ թվում՝ ծառերի, քարերի, բեկորների, ձյան կամ սառույցի վայր ընկնելու հետևանքով հասցված վնաս,*
- ✓ *Ավտոտրանսպորտային միջոցի՝ ջուրն ընկնելու հետևանքով հասցված վնաս,*
- ✓ *Երրորդ անձանց գործողություններ,*
- ✓ *Ավտոտրանսպորտային միջոցի հափշտակություն* (ընտրովի ռիսկ).

2. **«ՄԵՔԵՆԱՅԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ծառայություն**.

3. **«ՍԹԱՓ ՎԱՐՈՐԴ» ծառայություն.**

2. Ո՞Ր ԱՎՏՈՏՐԱՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԵՆ ԵՆԹԱԿԱ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

Ավտոտրանսպորտային միջոցները (ԱՄ) և դրանց լիազորված վարորդները պետք է բավարարեն հետևյալ պայմաններին՝

- ✓ *ԱՄ արտադրություն՝ մինչև 10 տարվա*
- ✓ *ԱՄ արժեք՝ 6 մլն ՀՀ դրամ և ավելի*
- ✓ *ԱՄ տեսակ՝ մարդատար, «B» կարգ*
- ✓ *ԱՄ շահագործման նպատակ՝ անձնական*

- ✓ *Վարորդի տարիքը՝ 21 տարեկան և ավելի*
- ✓ *Վարորդի ստաժը՝ 3 տարի և ավելի*
- ✓ *Վարորդի ԲՄ դասը՝ 1 – 15 ԴԱՄ*

Ապահովագրման ենթակա չեն հատուկ խմբի մեջ մտնող ԱՄ-ները, որոնք սահմանվում են հաշվիչով:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՉԱՓԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

- ✓ Վարորդի ԲՄ դաս /կիրառվում է վարորդների ԲՄ դասերից ամենաբարձրը/,
- ✓ ԱՄ մակնիշը, մոդելը և տարեթիվը,
- ✓ Հափշտակության ռիսկի ներառումը ծածկույթում:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐ

Ապահովագրական հատուցումներն իրականացվում են ապահովագրական գումարի նկատմամբ հետևյալ սահմանաչափերով՝

<u>Մեքենայի վարձակալություն ծառայություն՝</u> վթարի արդյունքում մեքենային հասցված վնասն՝ ապահովագրության պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը գերազանցելու դեպքում	*Ապահովագրության ժամկետի ընթացքում մինչև 10 օր ժամկետով վարձակալված մեքենայի* տրամադրում*

**** Վարձակալված մեքենա՝*** մինչև 5 տարվա արտադրության, ստանդարտ դասի սեդան թափքի տեսակի, ավտոմատ փոխանցման տուփով մեքենա:

Վարձակալված մեքենայի շահագործման ընթացքում Ապահովագրողը չի կրում տվյալ մեքենայի վնասի, տույժերի, իրավախախտումների գծով որևէ պատասխանատվություն: Վարձակալված մեքենայի տրամադրման փաստը, կողմերի իրավունքներն ու պարտավորություններն արձանագրվում են Վարձակալության պայմանագրով:

<u>Սթափ վարորդ ծառայություն՝</u> վարորդի՝ ալկոհոլի ազդեցության տակ գտնվելու դեպքում	*Ապահովագրության ժամկետի ընթացքում մինչև 3 անգամ՝ Երևանում և հարակից 20 կմ շրջաններում*

«Սթափ վարորդ» ծառայության շրջանակներում Ապահովագրողի կողմից վարորդի տրամադրման դեպքում տվյալ վարորդը լռելյայն համարվում է «Լիազորված վարորդ»:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության պայմանագիրը կնքվում է 1 տարի ժամկետով՝ ուժի մեջ մտնելով կնքմանը հաջորդող 2-րդ օրը:

6. Ի՞ՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- ✓ Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ անձնագիր,
- ✓ Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր,
- ✓ Լիազորված տիրապետողի անձնագիր և վարորդական վկայական:

Ծրագիրը կարգավորվում է Ընկերության Խորհրդի կողմից հաստատված «Ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրության պայմաններ»-ով: